

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 45/3

10 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Տեխնոպոլիս» ՍՊԸ 12.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 28.09.2015 թ-ի թիվ 6109101 ակտի դեմ:

«Տեխնոպոլիս» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 07.08.2015 թ-ի թիվ 6109101 հանձնարարագրի համաձայն «Տեխնոպոլիս» ՍՊԸ-ում իրականացվել է ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում կազմվել է ակտ և առաջադրվել է տուգանք «ՀԴՄ-ների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Սակայն նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, «Տեխնոպոլիս» ՍՊԸ-ի համար ՀԴՄ-ի կիրառումը պարտադիր չէ: Հետևաբար, հանձնարարագրի առարկան ի սկզբանե, և նրան հաջորդող ստուգումը չի կարելի համարել օրինական: Այդ մասին մանրամասն հիմնավորումներով հայտնվել է ստուգման արձանագրության և ակտի նախագծի վերաբերյալ Մաշտոցի ՀՏ ներկայացված առարկություններում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 07.08.2015 թ-ի թիվ 6109101 հանձնարարագրի համաձայն «Տեխնոպոլիս» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 28.09.2015 թ-ի թիվ 6109101 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ ավագ հարկային տեսուչ Լևոն Մարտիրոսյանի կողմից 09.09.2015 թ-ին ժամը 13:40-ին ք.Երևան, Սեբաստիա 16 ՅՕա հասցեում գտնվող տպագրատանը պատվիրված բուկլետների դիմաց տրամադրվել է 13000 դրամի չափով կանխավճար, սակայն ընկերության կողմից չի տրամադրվել համապատասխան փաստաթուղթ և ՀԴՄ կտրոն, քանի որ տվյալ հասցեում հսկիչ-դրամարկղային մեքենա ներդրված չէր:

Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման:

Ընկերության կողմից խախտվել են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, որի համար «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվել է տուգանք 300.000 դրամի չափով:

Ակտի 1-ին կետով արձանագրված խախտման կապակցությամբ հարկ է նշել, որ քննարկվող դեպքում ընկերության տպագրատանն արձանագրվել է բուկլետների պատրաստման համար վճարված կանխավճարի դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրվելու փաստ, այն դեպքում, երբ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանված է, որ կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է: Սակայն, նշված խախտման համար պատասխանատվության միջոցը կիրառելիս հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ ընկերության 2013 թվականի արդյունքներով իրացումից հասույթը գերազանցել է 10.0 մլն դրամը: Հետևապես, ղեկավարվելով ՀՀ կառավարության 05.09.2013 թ-ի թիվ 968-Ն որոշման 1-ին մասի 2-րդ կետի բ) ենթակետի դրույթներով, ընկերությունը պարտավոր էր ներդնել նոր սերնդի ՀԴՄ:

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետով սահմանված՝ համապատասխան ժամկետից հետո հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ ցանցային կապուղիների միջոցով տեղեկության ուղարկումն իրականացնող մեքենա չկիրառելու կամ հսկիչ-դրամարկղային մեքենային միացվող համապատասխան սարք չտեղադրելու համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը նախազգուշացվում է»:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեկ տարվա ընթացքում, Ակտով արձանագրված խախտման ընկերության կողմից կատարվել է առաջին անգամ (չի կրկնվել), հետևապես Ակտով պատասխանատվության տեսակը պետք է սահմանվեր ոչ թե տուգանք՝ 300.000 դրամի չափով, այլ՝ նախազգուշացում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 28.09.2015 թ-ի թիվ 6109101 ակտի 1-ին կետով կիրառված պատասխանատվությունը՝ 300.000 դրամի չափով տուգանք, փոխարինել նախազգուշացմամբ:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

